

BlackBerry–ի Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոններ

BlackBerry Limited–ը և իր դուստր ձեռնարկություններն ու մասնաճյուղերը ստանձնել են ձեր անձնական տեղեկատվության (նույնականացվող անհատի) պաշտպանությունը և անվտանգությունը ապահովելու երկարաժամկետ քաղաքականությունը (ինչպես դա սահմանված է անձնական տեղեկատվության կամ տվյալների պաշտպանության կիրառելի օրենքներով) :

Սույն Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնները բացատրում է BlackBerry–ի գործունեությունը՝ ձեր անձնական տեղեկատվությունը մշակելու առումով, ինչը ներառում է ձեր անձնական տեղեկատվության հավաքագրումը, օգտագործումը, փոխանցումը, պահպանումը կամ բացահայտումը, բացառությամբ այն դեպքի, երբ BlackBerry–ի դուստր ընկերությունը կամ մասնաճյուղը հրապարակել է իր սեփական անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնները: Բացի այդ, կոնկրետ BlackBerry արտադրանքի, ծառայության, ծրագրի կամ կայքէջի (“BlackBerry Առաջարկ”) հետ կապված պայմանագրերը կամ ծանուցումները կարող են լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել BlackBerry կողմից ձեր անձնական տեղեկատվության մշակման վերաբերյալ (“Ծանուցում”): Սույն Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնների կիրառումը ենթակա է կիրառելի օրենքներին, ներառյալ՝ օրենսդրությանը, որն է դատարանների և այլ իրավասու մարմինների կանոնակարգերին և հրամաններին, այլ իրավական պահանջներին կամ իրավական գործընթացներին: Կիրառելի դեպքերում ձեր անձնական տեղեկատվության հսկիչ է հանդիսանում այն BlackBerry–ի հաստատությունը, որի հետ դուք պայմանագիր եք կնքել:

1. BlackBerry–ի հաշվետու լինելը

BlackBerry–ը պատասխանատու է իր հսկողության տակ գտնվող անձնական տեղեկատվության համար, ներառյալ անձնական տեղեկատվության փոխանցումը երրորդ կողմին՝ BlackBerry–ի անունից մշակման նպատակով (օրինակ՝ նրա ծառայություններ մատուցողները):

2. Ձեր անձնական տեղեկատվության BlackBerry–ի կողմից օգտագործման նպատակները

Երբ դուք օգտագործում եք BlackBerry Առաջարկը, հաղորդակցվում եք BlackBerry–ի հետ, BlackBerry–ի կողմից հովանավորվող մրցույթին եք մասնակցում կամ այլ կերպ փոխհարաբերվում եք BlackBerry–ի հետ, BlackBerry–ը կարող է մշակել ձեր անձնական տեղեկատվությունը հետևյալ նպատակներով.

- Ձեր կարիքները և նախասիրությունները հասկանալու և դրանք բավարարելու և ձեզ BlackBerry Առաջարկ տրամադրելու համար, օրինակ
 - հաշիվների ներկայացման, ակտիվացման, տեխնիկական սպասարկման, աջակցության, անսարքությունների ահազանգման, վեճերի լուծման, ապակտիվացման, վերանորոգման, վերակահավորման, փոխարինման, BlackBerry Առաջարկների նորացման կամ թարմացման նպատակներով,

- ապահովելու BlackBerry Առաջարկները տեխնիկապես պատշաճ գործելը և օգնելու անսարքության բացահայտմանը ու վերացմանը;
- կատարելու կամ ուժի մեջ դնելու BlackBerry Առաջարկների նկատմամբ կիրառելի Ծանուցումները,
- ձեր հարցումները մշակելու կամ դրանց պատասխանելու համար;
- Պատրաստել և բարելավել գոյություն ունեցող BlackBerry Առաջարկները, ներառյալ ձեզ հետ հաղորդակցումը նրանց վերաբերյալ տարբեր միջոցներով, օրինակ՝ դրանք ձեզ համար մատչելի դարձելով կամ դրանք ձեզ ուղարկելով,
 - Մոդելների նորացումներ կամ թարմացումներ, կամ BlackBerry Առաջարկների մասին ծանուցումներ, մոդելների նորացումներ կամ թարմացումներ կամ համապատասխան արտադրանքների, ծառայությունների և ծրագրերի վերաբերյալ երրորդ կողմի բովանդակություն,
 - Ծանուցումներ գովազդային արշավների և ապագա միջոցառումների մասին,
- Կառավարել և զարգացնել մեր բիզնեսը և գործունեությունը, օրինակ՝
 - Հայտնաբերել, մշտադիտել, քննել, վերաորակել կամ փորձել կանխել խարդախությունը և տեխնիկական կամ անվտանգության հարցերը կամ պաշտպանել BlackBerry սեփականությունը,
 - ապահովել բիզնեսի շարունակականությանը և աղետների վերականգմանն ուղղված գործողությունները,
 - ապահովել BlackBerry իրավունքների կատարում,
 - վիճակագրական նպատակների համար,
- իրավական և կարգավորիչ պահանջներին համապատասխանելու և արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար, օրինակ՝
 - դատարանի հրամաններին, որոշումներին կամ այլ իրավական պահանջներին կամ իրավական գործընթացներին արձագանքելու համար,
 - ձեր կամ ուրիշների կյանքը կամ ֆիզիկական անվտանգությունը վտանգող արտակարգ իրավիճակներում օժանդակություն տրամադրելու համար; կամ
- ցանկացած այլ նպատակների համար, որոնց դուք համաձայնել եք, ինչպիսիք են նրանք, որոնք կարող են շարադրված լինել Ծանուցումներում, և այլ նպատակներ՝ որոնք թույլատրելի են կամ պահանջվում են ցանկացած կիրառելի օրենքով:

3. Ձեր համաձայնությունը

Մինչ BlackBerry Առաջարկներից օգտվելը, ձեզանից հնարավոր է պահանջվի, որ համաձայնվեք մի կիրառելի Ծանուցմանը, որը կարող է պարունակել BlackBerry-ի կողմից ձեր անձնական տեղեկատվության մշակմանը վերաբերող լրացուցիչ տեղեկություններ: Ծանուցմանը ձեր համաձայնությունը կամ BlackBerry Առաջարկներից օգտվելը մատնանշում է , որ դուք համաձայն եք, որ BlackBerry-ը մշակի ձեր անձնական տեղեկատվությունը BlackBerry-ի կողմից մատնանշված նպատակների համար:

ա) Երբ համաձայնություն ստանալը պարտադիր չէ:

Որոշ դեպքերում ձեր անձնական տեղեկատվությունը կարող է մշակվել առանց ձեր համաձայնության՝ կախված վարչական–իրավական միավորից և կիրառելի օրենքներից: Օրինակ՝ BlackBerry-ը կարող է համաձայնություն չխնդրել հետևյալ դեպքերում.

- արտակարգ իրավիճակում, երբ վտանգի կարող է ենթարկվել անձի կյանքը, առողջությունը կամ անվտանգությունը:
- երբ համաձայնությունն խնդրելը անհնար կամ ոչ պրակտիկ է դառնում իրավական, բժշկական կամ անվտանգության պատճառներով,
- երբ տեղեկատվությունը անհրաժեշտ է խարդախությունը հայտնաբերելու և կանխելու համար,
- երբ տեղեկատվությունը բացահայտվում է BlackBerry-ը ներկայացնող իրավաբանին,
- պարբեր հավաքագրելու համար,
- դատական ծանուցագրի, որոշման կամ այլ դատական հրամանի, իրավական պահանջի կամ իրավական գործընթացի պահանջները կատարելու համար, կամ
- ինչպես այլ կերպ պահանջվում կամ թույլատրվում է օրենքով:

բ) Երեխաներ

BlackBerry-ը կանխամտածված կերպով չի մշակում 13 տարեկանից փոքր անձանց անձնական տեղեկատվությունը՝ առանց նրանց ծնողի կամ իրավական խնամակալի համաձայնության:

գ) ընդհանրացված կամ անանուն տեղեկատվություն

BlackBerry-ը իրավունք է վերապահում մշակել, վաճառել, գործարք կատարել կամ վարձակալել ընդհանրացված կամ անանուն տեղեկատվություն, որը չի սառցիացվում կամ չի կապվում նույնացվելիք անձի հետ:

4. Մշակվող տեղեկատվության տեսակները

BlackBerry-ը կարող է մշակել զանազան տեսակի տեղեկատվություն: Օրինակ՝

ա) Հաշվի և անդամակցության վերաբերյալ տեղեկատվություն. Մշակված տեղեկատվությունը կարող է ներառել ձեր անունը, փոստային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, BlackBerry ID-ն, սարքի նույնականացման տեղեկատվությունը, ինչպիսիք են ձեր BlackBerry PIN-ը, էթերի ծառայության տրամադրողի տեղեկատվությունը, BlackBerry-ի հետ հաղորդակցությունը և որևէ գրանցված բողոքները: BlackBerry-ը նաև կարող է մշակել ձեր հաշվի գրանցման տվյալները, գաղտնաբառերը, անձնական տեղեկատվությունը և ձեր կողմից տրամադրվող այլ տեղեկատվությունը, որը դյուրացնում է ձեր կողմից BlackBerry Առաջարկների օգտագործումը:

բ) Ծրագրեր. որոշ դեպքերում, BlackBerry-ը կարող է մշակել ձեր սարքում օգտագործվող ծրագրերը, ներառյալ՝ Երրորդ կողմի առաջարկների տեղեկատվությունը (օրինակ՝ երրորդ կողմի կողմից, ներառյալ էթերի ծառայության տրամադրողի կամ ծրագրի պատրաստողի տրամադրված ծրագրերը, արտադրանքները, ծառայությունները, համակարգչային ծրագրերը, կայքէջերը կամ բովանդակությունը, որոնք կարող են օգտագործվել BlackBerry Առաջարկների հետ համակցությամբ, սակայն չեն առաջարկվում, կարգավորվում կամ աջակցվում BlackBerry կողմից)՝ Նաև, էթե դուք նախընտրում եք օգտագործել Երրորդ կողմի առաջարկները ձեր BlackBerry հաշվից կամ

սարքից, որոշակի տեղեկատվություն կարող է հավաքագրվել և բացահայտվել երրորդ կողմին, կամ երրորդ կողմից BlackBerry-ին՝ դյուրացնելու համար տրամադրվող ծառայությունները և գործառնությունները:

զ) **գլոբալ ցանցի օգտագործմամբ կամ պահեստային տվյալներ.** Եթե դուք օգտագործում եք գլոբալ ցանցի օգտագործմամբ կամ պահեստային տվյալներ և վերականգնում եք BlackBerry կողմից կամ անունից տրամադրվող ծառայությունը, ապա ձեր սարքից կամ հաշվից տեղեկատվությունը, ներառյալ կոնտակտները, էլեկտրոնային փոստի հասցեները, օրացույցը, մեմոները, առաջադրանքները, էկրանի նկարները, կարգավիճակի հաղորդագրությունները, մեդիա ֆայլերը և այլ սարքի տեղեկատվությունը կարող է ուղարկվել BlackBerry-ին՝ դյուրացնելու կամ բարելավելու համար ձեր սարքի տվյալների օգտագործումը, հեռավոր մուտքը և տվյալների վերականգնումը տրամադրվող ծառայության միջոցով:

դ) **Քուքի-ֆայլեր կամ նմանատիպ տեխնոլոգիաներ.** Քուքին փոքր տեքստային ֆայլ է կամ տվյալների մասնիկ, որը արբեռնվում է և պահպանվում է ձեր համակարգչում կամ սարքում, երբ դուք կայքէջ եք այցելում: Ապա քուքի-ֆայլերը ուղարկվում են հետ սկզբնական կայքէջ յուրաքանչյուր հաջորդական այցելության ժամանակ, կամ մեկ այլ կայքէջ, որը ճանաչում է քուքին: Որպես BlackBerry Առաջարկների մի մաս, BlackBerry-ը կարող է ժամանակ առ ժամանակ օգտագործել քուքի-ֆայլերի կամ նմանատիպ տեխնոլոգիաների ("Քուքիների") տարբեր տեսակներ: Որոշ քուքի-ֆայլեր **անհրաժեշտ** են ձեր կողմից BlackBerry Առաջարկների օգտագործումը դյուրացնելու համար (ինչպիսիք օրինակ՝ գնումների զամբյուղը օգտագործելիս) կամ պաշտպանելու համար ձեզ և BlackBerry-ին, երբ դուք գրանցվում եք գործում որոշակի ծառայությունների համար (ինչպիսիք են օրինակ ձեր հաշվի գրանցման տվյալները պահպանումը՝ ձեր կողմից ցանկացած պահին BlackBerry Առաջարկների օգտագործումը դյուրացնելու համար կամ հաստատելու համար որ դուք մուտք եք գործել): Այլ քուքի-ֆայլերը ավելի շատ կապված են այնպիսի **գործողությունների** հետ, օրինակ՝ վերլուծության կամ կոնտեքստային նպատակներով, որոնք օգնում են մեզ հասկանալ, թե ինչպես են օգտագործողները ներգրավվում BlackBerry Առաջարկների մեջ, որպեսզի մենք կարողանանք տրամադրել նոր և բարելավված BlackBerry Առաջարկներ (օրինակ, թե որ էջերը կամ հատկանիշները ամենաշատն են օգտագործվում): Որոշ քուքի-ֆայլերը ավելի շատ կապված են **գործառնությունների** հետ և օգնում են ձեզ անձնականացնել ձեր փորձը և դյուրացնում են BlackBerry Առաջարկների օգտագործումը (ինչպիսիք է ձեր լեզուն կամ վարչական-իրավական միավորի նախասիրությունները), կամ օգնում են BlackBerry-ին ձեզ համար արտացոլել անձնականացված բովանդակությունը: Որոշ քուքի-ֆայլեր կամ նմանատիպ տեխնոլոգիաներ կարող են օգտագործվել **ուղղորդված գովազդի** նպատակների համար (օրինակ՝ որոշակի BlackBerry Առաջարկներ կարող են ֆինանսավորվել գովազդից ստացվող եկամտից և կարող են ցույց տալ գովազդներ, որոնք կարող են ուղղված լինել ոչ BlackBerry կողմից հավաքագրված անձնավորված նույնականացման հատկանիշներին և ընդհանրացված տվյալներին, և BlackBerry-ը կամ մեր ծառայություն տրամադրողները կարող են տեղադրել այդպիսի գովազդը BlackBerry Առաջարկներում): BlackBerry Առաջարկների վերաբերյալ անանուն կամ ընդհանրացված տեղեկատվությունը կարող է տրամադրվել այնպիսի ձևով, որը չի բացահայտում ձեր անձը մեր ծառայություն տրամադրողներին, որպես վերլուծական ծառայությունների մի մաս՝ օգնելու համար կառավարել առցանց գովազդը: Բրաուզերների մեծ մասի նախնական կարգավորումները թույլ են տալիս քուքի-ֆայլերի ընդունումը, սակայն դուք սովորաբար կարող եք

փոփոխել ձեր բրաուզերի կարգավորումները, այնպես, որ մերժեք Քուքի-ֆայլերը կամ հաղորդագրություն ստանալ այն պահին, երբ ուղարկվում է Քուքի-ֆայլ: Սովորաբար դուք կարող եք անջատել կամ արգելափակել Քուքի-ֆայլերի կարգավորումները ձեր բրաուզերում, սակայն դա կարող է ազդել որոշ BlackBerry Առաջարկներից ձեր օգտվելու կարողության վրա, որովհետև դրանք հնարավոր է լավ կամ ընդհանրապես չաշխատեն ապաստիվացված Քուքի-ֆայլերի դեպքում: Եթե դուք նախընտրում եք շարունակել առանց Քուքի-ֆայլերը ապաստիվացնելու, դա նշանակում է, որ դուք համաձայն եք օգտագործել Քուքի-ֆայլերը համաձայն սույն Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնների: Խնդրում ենք այցելել **«Նախասիրությունների կարգավորում»** ստորև ներկայացվող բաժինը Քուքի-ֆայլերի BlackBerry կողմից օգտագործման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար:

- ե) **Ֆինանսական տեղեկատվություն.** Եթե դուք անմիջապես BlackBerry-ից կամ մեր ծառայությունների տրամադրողներից արտադրանք, ծառայություն, համակարգչային ծրագիր կամ հաճախորդների աջակցություն եք գնում, BlackBerry-ը կարող է մշակել կրեդիտային քարտի կամ այլ վճարային տեղեկատվությունը և օգտագործել այն ծառայությունների դիմաց վճարումները և կրեդիտային ծառայությունները դյուրացնելու համար և, անհրաժեշտության դեպքում, վճարունակության ստուգումների համար: Նմանապես, BlackBerry-ը կարող է մշակել վճարային կամ այլ ֆինանսական տեղեկատվություն, երբ դուք օգտագործում եք Near Field Communications գործառնությունը ձեր BlackBerry սարքի վրա:
- զ) **Ընդհանուր օգտագործման տվյալներ.** Որոշ դեպքերում, այնպիսի տեղեկատվությունը, ինչպիսին է BlackBerry Առաջարկի հետ համատեղ օգտագործվող համակարգչային ծրագրի կամ տեխնիկայի տեխնիկական հատկանիշները կամ ընդհանուր օգտագործման տեղեկատվությունը կարող է մշակվել, երբ դուք օգտագործում եք այդպիսի արտադրանքներ, ծառայություններ կամ համակարգչային ծրագրեր (օրինակ՝ վեբ-բրաուզերի տեսակ, կայքէջերին հղում կատարելը կամ այցելելը, օպերացիոն համակարգի տարբերակը, ձեր սարքի մոդելը կամ անձնական համակարգչային պլատֆորմը, IP հասցեն), կամ երբ դուք օգտվում եք BlackBerry Անսարքությունների ահազանգման գործիքից (օրինակ՝ տարրական օգտագործման վիճակագրություն կամ տեղեկատվություն ձեր սարքի վերաբերյալ, ներառյալ՝ միջոցառումների գրանցամատյանները, ծրագրի կոնֆիգուրացիաները, մարտկոցի սպառման ժամկետը, ռադիո կամ Wi-Fi ազդանշանի մակարդակները, տեղեկատվություն սարքի վերակարգավորման և հիշողության կամ համակարգի աշխատանքի վերաբերյալ):
- ե) **Տեղեկատվություն գտնվելու վայրի վերաբերյալ.** Երբ դուք օգտվում եք BlackBerry Առաջարկներից, ակտիվացնում եք տվյալների ծառայությունները, օգտվում եք բրաուզերի կամ գտնվելու վայրի վրա հիմնվող գործառույթը ձեր սարքում, ապա ձեր սարքի հետ ասոցիացվող գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվությունը (օրինակ՝ Գլոբալ տեղորոշման համակարգ (GPS) կամ նմանատիպ արբանյակային տրիանգուլյացիոն տեղեկատվություն, կրիչի կամ թաուեր ID-ին, BSSID-ը (Հեռարձակվող ծառայության սարքի նույնականացողը), կամ MAC հասցեն (Սարքավորումների մուտքի հսկողության հասցե) Wi-Fi մուտքի կետերում, և տեսանելի Wi-Fi մուտքի կետերի կամ անլար ծառայությունների ազդանշանի ուժգնությունը կարող է հաղորդվել BlackBerry-ին կամ մեզ ծառայություններ տրամադրողներին: Եթե BlackBerry-ը հավաքագրում և հետագայում պահպանում է այդպիսի տեղեկատվությունը, այն կլինի այնպիսի ձևով, որ հնարավոր չի լինի ձեր անձը նույնականացնել (օրինակ՝ BlackBerry-ը

չի պահպանում համակարգ, որը կկապի կոնկրետ անձանց BSSID-ին): BlackBerry-ը կարող է մշակել այդպիսի տեղեկատվությունը՝ ձեզ տեղակատվություն տրամադրելու և գտնվելու վայրի հետ կապված ծառայություններ տրամադրելու կամ դրա տրամադրումը դյուրացնելու համար (օրինակ՝ քարտեզավորման ծառայություններ, տրաֆիկի գերբեռնվածության չափում, գտնվելու վայրից կախված գովազդներ կամ կուպոններ): Եթե դուք որոշում եք օգտվել գտնվելու վայրի հետ կապված ծառայություններից, ապա դուք համաձայնում եք, որ այդպիսի աշխարհագրական տեղակայման տեղեկատվությունը կարող է օգտագործվել ձեզ այդպիսի ծառայություններ տրամադրելու համար: Ձեր սարքի միջոցով դուք կարող եք կարգավորել կա՛մ ձեր սարքի GPS-ի կամ գտնվելու վայրի ընդհանուր կարգավորումները, կա՛մ անհատական կարգավորումները յուրաքանչյուր ծրագրի համար: Եթե դուք նախընտրում եք օգտվել գտնվելու վայրի վրա հիմնվող ծառայություններից կամ այլ ծրագրերից՝ այլ անձերին կամ հաստատություններին ձեր գտնվելու վայրը բացահայտելու համար, դուք ստանձնում եք դա անելու հետ կապված վտանգների համար պատասխանատվությունը և ձեր պարտականությունն է դրանք օգտագործել պատշաճ կերպով և կիրառելի օրենքին համապատասխան: Եթե օգտվում եք Երրորդ կողմի առաջարկներից, որոնք տրամադրում են գտնվելու վայրի վրա հիմնվող ծառայություններ, խնդրում ենք կարդալ երրորդ կողմի պայմանները և անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնները՝ որտեղ ասվում է, թե ինչպես է մշակվելու ձեր գտնվելու վայրի և անձնական տեղեկատվությունը, և թե ինչպես հրաժարվել երրորդ կողմի տրամադրվող գտնվելու վայրի վրա հիմնվող ցանկացած ծառայություններից և գովազդից:

ը) Ռրակի հսկողություն և հաճախորդների սպասարկում. Ձեր զանգերը BlackBerry Հաջախորդների սպասարկման բաժին և BlackBerry ծառայություն մատուցողներին կարող են ձայնագրվել որակի հսկողության և հաճախորդների սպասարկման այնպիսի նպատակների համար, ինչպիսիք են օգնությունը ձեր հարցումներին պատասխանելու, անսարքությունների ահազանգման, ուսուցման և վերլուծության առումով՝ սահմանելու միտումները և բարելավելու BlackBerry Առաջարկները:

թ) Երրորդ կողմի տեղեկատվություն. Եթե անհրաժեշտություն կա կատարել BlackBerry-ի կողմից սահմանված նպատակները, ապա BlackBerry-ը կարող է համակցել ձեր կողմից BlackBerry-ին տրամադրված տեղեկատվությունը այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության կամ Երրորդ կողմի Առաջարկների հետ: Օրինակ՝ BlackBerry-ը կարող է ձեր մասին անձնական տեղեկատվություն ստանալ երրորդ կողմերից, որոնք ձեզ տրամադրում են արտադրանքներ, ծառայություններ, համակարգչային ծրագրեր և կայքէջեր, որոնք դուք օգտագործում եք, ինչպիսիք են ձեր էթերային ժամանակի տրամադրողից՝ դյուրացնելու համար ձեր կողմից օգտագործվող անլար ծառայությունները կամ որոշ դեպքերում Երրորդ կողմի առաջարկ վաճառողից՝ ձեր սարքում օգտագործվող ծրագրերի վերաբերյալ: BlackBerry-ը այդ ամբողջ անձնական տեղեկատվության հետ վարվում է իր Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնների համաձայն, նաև կարող են կիրառվել BlackBerry-ի և երրորդ կողմերի միջև պայմանները, եթե այդպիսի գոյություն ունեն: Այնուամենայնիվ, երրորդ կողմին պատկանող ձեր անձնական տեղեկատվության օգտագործումը այդպիսի դեպքերում սահմանվում է երրորդ կողմի հետ ձեր պայմանագր(եր)ով, բացառությամբ այն դեպքի, երբ երրորդ կողմը հանդիսանում է BlackBerry ծառայության մատուցող:

Այս տեղեկատվության մի մասը ինքնին չի նույնականացնի ձեզ BlackBerry-ի հետ կամ անձնապես նույնականացվող չի լինի, և, հետևաբար, համարվում է ոչ անձնական տեղեկատվություն: Եթե BlackBerry-ը համակցում է այդպիսի ոչ անձնական տեղեկատվություն BlackBerry-ի ունեցած անձնական տեղեկատվության հետ, ապա համակցված տեղեկատվությունը դիտվում է անձնական տեղեկատվության՝ Անձնական տեղեկատվության պաշտպանության սույն Կանոններին համաձայն:

5. Ձեր անձնական տեղեկատվության BlackBerry-ի կողմից մշակումը

ա) Պահում

BlackBerry-ը պահում է անձնական տեղեկատվությունը այնքան ժամանակ, որքան հարկավոր է BlackBerry-ի կողմից սահմանած նպատակներին հասնելու համար կամ, հակառակ դեպքում, որքան անհրաժեշտ է կիրառելի օրենքները կատարելու համար: Եթե անձնական տեղեկատվությունը այլևս անհրաժեշտ չէ կամ չի համապատասխանում BlackBerry-ի կողմից սահմանված նպատակներին կամ չի պահանջվում ըստ կիրառելի օրենքների, ապա BlackBerry-ը քայլեր է ձեռնարկում այն ջնջելու, ոչնչացնելու, ընդհանրացնելու կամ անանուն դարձնելու ուղղությամբ: Բարեխիղճ գործարարության սկզբունքներին համապատասխան, BlackBerry-ը շարունակում է զարգացնել իր հսկողությունը, պլանները և գործունեությունը ձեր անձնական տեղեկատվությանը վերաբերող տվյալների և գրանցումների պահման և ոչնչացման նպատակով:

բ) Միջազգային գործառնություններ և տվյալների փոխանցումներ

BlackBerry-ը տարածված է աշխարհով մեկ և ունի գրասենյակներ և շինություններ բազում վարչական-իրավական միավորներում: Բացառությամբ այն դեպքի, երբ BlackBerry-ի դուստր ձեռնարկությունը կամ մասնաճյուղն ունի իր սեփական Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնները, BlackBerry-ի բոլոր միջազգային գործառնությունները և տվյալների փոխանցումները ենթակա են սույն Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոններին:

Դուք համաձայնում եք, որ ձեր բարելավված սպասարկման և BlackBerry Առաջարկներից օգտվելու կամ նրանց աշխատանքը դյուրացնելու համար, ձեր անձնական տեղեկատվությունը կարող է հավաքագրվել, օգտագործվել, մշակվել, փոխանցվել կամ պահվել BlackBerry-ի անունից բազում վարչական-իրավական միավորներում, ներառյալ՝ Կանադան, Միացյալ Նահանգները, Եվրոպական Տնտեսական Տարածքը, Մինգապուրը և ցանկացած երկիր, որտեղ BlackBerry-ը կամ մեր ծառայություն մատուցողները ունեն գրասենյակներ կամ շինություններ, ներառյալ այն երկիրները, որոնք կարող են գտնվել ձեր գտնվելու տարածաշրջանից դուրս կամ կարող են ունենալ տարբերակվող անձնական տեղեկատվության և տվյալների պաշտպանության կանոններ, և, հետևաբար, կարող են ենթարկվել այդ երկիրների օրենսդրությանը: Եթե դուք Եվրոպական Տնտեսական Տարածքի բնակիչ եք, կամ մի երկրի բնակիչ, որը, առանց ձեր համաձայնության, սահմանափակում է այդ վարչական-իրավական միավորից դուրս տվյալների փոխանցումը, դուք համաձայնում եք, որ ձեր անձնական տեղեկատվությունը փոխանցվի Եվրոպական Տնտեսական Տարածքից կամ ձեր երկրից դուրս՝ BlackBerry-ի անունից մշակման կամ պահպանման նպատակով:

Հաշվի առնելով մեր բիզնեսի միջազգային բնույթը՝ BlackBerry-ից կարող է նաև պահանջվել, որ այն բացահայտի կամ այլ կերպ հասանելի դարձնի ձեր հաղորդակցության տվյալները, ներառյալ ձեր հաղորդակցության բովանդակությունը, կամ այլ տեղեկատվություն՝ համաձայն այն երկիրների օրենքներին, որտեղ գտնվում է BlackBerry-ը, մեր ծառայություններ տրամադրողները, մասնաձյուղերը և տվյալները: Օգտվելով BlackBerry Առաջարկներից՝ դուք համաձայնում եք մեր կողմից կիրառելի օրենքների կատարմանը, ներառյալ՝ ցանկացած իրավական գործընթաց, որը BlackBerry-ի կարծիքով պահանջում է, որ մենք հասանելի դարձնենք ձեր հաղորդակցության տվյալները և այլ տեղեկատվությունը:

զ) Մարկետինգային հաղորդակցություն BlackBerry-ից

BlackBerry-ը կարող է հաղորդակցվել ձեզ հետ մի շարք միջոցներով, ինչպիսիք են էլեկտրոնային փոստի հասցե(ներ) օգտագործելը, որոնք դուք ասցիացնում եք ձեր BlackBerry սարքի հետ կամ ձեր սարքի եզակի նույնականացնողը (օրինակ՝ PIN-ը): BlackBerry-ը կարող է հաղորդել տեղեկատվություն, հարցումներ, մարկետինգային նյութեր, գովազդներ կամ հարմարեցված բովանդակություն, որը անհատականացվել է՝ փորձելու այն ձեզ ավելի պատշաճ դարձնել՝ որպես BlackBerry-ի հետ ձեր ունեցած բիզնես հարաբերության մի մաս: Օրինակ՝ մենք կարող ենք այդպես անել այն դեպքում, երբ դուք չեք անջատել այդպիսի հաղորդարություններ ստանալու գործառնությունը և այն օրինական է, այն դեպքում, երբ դուք բացահայտ կերպով համաձայն եք այդպիսի հաղորդագրություններ ստանալ: այն դեպքում, երբ օգտվում եք անվճար ծառայություններից, որոնք հիմնված են գովազդի վրա (ներառյալ թիրախային գովազդը, որը հիմնվում է անձնական տվյալների վրա), կամ օգտագործելով ընդհանրացված տվյալներ կամ տվյալեր, որոնք անանուն են դարձել: BlackBerry-ը կարող է ձեզ ժամանակ առ ժամանակ հարցնել, արդյոք դուք ցանկանում եք ստանալ հայտարարություններ, նորություններ, առաջարկներ, միջոցառումների հրավերներ BlackBerry-ի կամ BlackBerry Առաջարկների վերաբերյալ BlackBerry-ից կամ լիազորված երրորդ կողմերից: Դուք կարող եք նաև որոշել BlackBerry-ին տեղեկատվություն տրամադրել BlackBerry-ի զանազան գովազդներին ի պատասխան: Եթե տալիս եք համաձայնություն մասնակցելու մրցույթներին, հարցումներին, անվճար բաշխումներին, ակնարկներին կամ այլ գովազդային ակցիաներին, որի հովանավորը կամ հովանավորներից մեկը BlackBerry-ն է, խնդրում ենք հավաստիանալ, որ դուք կարդացել եք սույն Օսնուցումը, որը կարող է ասցիացվել այդ նախաձեռնությունների հետ՝ ավելի մանրամասն իմանալու համար, թե ինչ է լինելու ձեր անձնական տեղեկատվության հետ: Սովորաբար BlackBerry-ի յուրաքանչյուր մարկետինգային կամ առևտրային հաղորդագրության մեջ առկա է բաժանորդագրությունը անջատելու տարբերակը: Խնդրում ենք այցելել ստորև ներկայացված **“Ձեր նախասիրությունների կարգավորում”** բաժինը՝ BlackBerry-ից մարկետինգային կամ առևտրային հաղորդագրությունների կառավարման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար:

դ) Ծառայությանը վերաբերող հաղորդակցություն BlackBerry-ից

BlackBerry-ը կարող է ձեզ ուղարկել ծառայություններին վերաբերող որոշակի հաղորդակցություններ: Օրինակ՝ BlackBerry-ը կարող է ուղարկել ողջույնի էլեկտրոնային փոստի նամակ կամ հաղորդակցություն, երբ դուք առաջին անգամ գրանցում եք ձեր սարքը՝ տեղեկացնելու ձեզ ծառայության և պայմանների, կարևոր փոփոխությունների մասին, տեղեկացնելու ձեզ, թե ինչպես կառավարել ձեր գրանցման տվյալները և հաշիվը, տրամադրելու

համար ծառայությունների կառուցվածքի ծանուցագրեր կամ տեղեկատվություն մոդելի նորացման կամ թարմացման վերաբերյալ, երաշխիքային տեղեկատվության տրամադրման համար, արտադրանքի շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկատվություններ, ապահովության և անվտանգության վերաբերյալ տեղեկատվություն, կամ ներկա կամ նախկին օգտագործողների հարցումներ:

Քանի որ այդպիսի ծառայությունների հետ կապված հաղորդագրությունները կարևոր են BlackBerry Առաջարկների ձեր օգտագործման համար, դուք կարող եք չարգելափակել այդ հաղորդագրությունների ստացումը:

ե) Տեղեկատվության փոխանակում

Անձնական տեղեկատվության պաշտպանության սույն Կանոնների համաձայն, BlackBerry-ը կարող է փոխանակել ձեր անձնական տեղեկատվությունը BlackBerry-ի շրջանակներում կամ ձեր ծառայությունների տրամադրողների հետ: BlackBerry-ը նաև կարող է տրամադրել տեղեկատվությունը մեր ֆինանսական, ապահովագրության, իրավաբանական, հաշվապահական կամ այլ խորհրդատուների հետ, որոնք BlackBerry-ին մասնագիտական ծառայություններ են տրամադրում: BlackBerry-ը նաև կարող է տրամադրել տեղեկատվությունը սույն Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնների համաձայն՝ երրորդ կողմերին, որոնք ներգրավված են BlackBerry-ի Առաջարկը ձեզ տրամադրելու մեջ, ներառյալ էթերաժամի ծառայության տրամադրողները, լիազորված վերավաճառողները, դիստրիբյուտորները, որպես կոմերսանտ գրանցվածները, ենթակապալառուները կամ BlackBerry-ի մատակարարման կամ վերանորոգման ցանցերին մասնակցող հաստատությունները:

Որոշակի իրավիճակներում, երբ դուք գնում եք կամ օգտագործում եք Երրորդ կողմի Առաջարկը (օրինակ՝ վճարովի բովաղնակության բաժանորդագրության ծառայություն, ներբեռնված ծրագիր), BlackBerry-ը կարող է երրորդ կողմին տրամադրել որոշակի տեղեկատվություն ձեզ այդ արտադրանքը, ծառայությունը կամ ծրագիրը տրամադրելու նպատակով, և ապա ձեր տեղեկատվությունը ենթակա կլինի երրորդ կողմի անձնական տեղեկատվության պաշտպանության կանոններին: Մենք խրախուսում ենք բոլոր օգտագործողներին իմանալ այդպիսի երրորդ կողմերի անձնական տեղեկատվության պաշտպանության պրակտիկայի մասին, մինչև նրանց արտադրանքները, ծառայությունները կամ ծրագրերը գնելու համաձայնություն տալը:

BlackBerry-ը օգտագործում է պայմանագրային և այլ միջոցներ պաշտպանության համեմատելի մակարդակ ապահովելու համար, մինչև տեղեկատվությունը մշակվում է մեր ծառայություն տրամադրողների կողմից: BlackBerry-ի կանոնների համաձայն այն ստանձնում է գաղտնիության պաշտպանության պարտավորությունները որևէ երրորդ կողմի հետ, որը գաղտնի տեղեկատվություն է ստանում, ներառյալ՝ BlackBerry-ից ստացվող անձնական տեղեկատվությունը: Օրինակ՝ բացառությամբ այն դեպքի, երբ BlackBerry-ից պահանջվում է կամ օրենքով թույլատրվում է բացահայտել անձնական տեղեկատվությունը, մեր ծառայությունների տրամադրողները, ում մենք տրամադրում ենք ձեր անձնական տեղեկատվությունը, սովորաբար համաձայնում են գաղտնի պահել այդ տեղեկատվությունը և այդ տեղեկատվությունը օգտագործել միայն այն նպատակների համար, որոնց համար այն տրամադրվել է կամ համապատասխանելու համար կիրառելի օրենքներին:

BlackBerry-ի բոլոր ակտիվների կամ դրանց մի մասի վաճառքի դեպքում, BlackBerry-ը կարող է տրամադրել անձնական տեղեկատվությունը երրորդ կողմ հանդիսացող գնորդին:

BlackBerry-ը կարող է օգտագործել երրորդ կողմերը (օրինակ՝ գովազդային ցանցերը)՝ որպես թիրախ ընտրելու գովազդներում ոչ անձնապես նույնականացվող հատկանիշները կամ ընդհանրացված տվյալները, որոնք ստացվել են BlackBerry-ի կողմից մշակված անձնական տվյալներից, և այդպիսի երրորդ կողմերին տրամադրել ընդհանրական վիճակագրական տվյալներ, որոնք վերաբերում են ստացվող գովազդներին: Խնդրում ենք այցելել ստորև ներկայացված **«Ձեր նախասիրությունների կարգավորումը»** բաժինը BlackBerry-ի հետ մարկետինգային կամ առևտրային հաղորդակցությունը կարգավորելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար:

զ) Երրորդ կողմի առաջարկներ

Այն բոլոր ծրագրերը կամ ծառայությունները, որոնք դուք ներբեռնում և օգտագործում եք ձեր սարքում կամ BlackBerry Առաջարկների միջոցով BlackBerry-ի սեփականությունը չեն կամ BlackBerry-ը դրանք բոլորը չի սնօրինում: Երբ դուք ներբեռնում կամ օգտագործում եք Երրորդ կողմի առաջարկները, ապա անձնական տեղեկատվությունը ձեր սարքից կամ այլ BlackBerry Առաջարկներից կարող է հասանելի լինել այդպիսի երրորդ կողմերի համար: Օրինակ՝ Երրորդ կողմի առաջարկի համար կարող են հասանելի լինել սարքի այնպիսի տվյալները, ինչպիսիք են կոնտակտները, օրացույցի նշումները, էլեկտրոնային փոստը, գտնվելու վայրի վրա հիմնվող տեղեկատվությունը, կամ նրա համար կարող են հասանելի լինել կամ ուրիշներին հայտնել սարքում պահվող ֆայլերը կամ տվյալները (ներառյալ Երրորդ կողմի լրացուցիչ առաջարկները): Դուք պետք է կարդաք անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնները և այդպիսի երրորդ կողմերի ցանկացած պայմանագրերը՝ հասկանալու համար, թե ինչպես են այդ հաստատությունները վարվելու ձեր անձնական տեղեկատվության հետ, քանի որ BlackBerry-ը պատասխանատվություն չի կրում երրորդ կողմերի կամ նրանց ծրագրերի, արտադրանքների, ծառայությունների և համակարգչային ծրագրերի հետ ձեր գործարգների համար: BlackBerry-ը անմիջապես չի վերահսկում, թե ինչպես են այդպիսի երրորդ կողմերը մշակում անձնական տեղեկատվությունը, որոնք նրանք հավաքագրում են ձեր կողմից օգտագործվող Երրորդ կողմի առաջարկների հետ կապված:

Որոշ դեպքերում դուք կարող եք կարգավորել Երրորդ կողմի առաջարկներին տրվող թույլտվությունները: Դուք պետք է ժամանակ առ ժամանակ վերանայեք այդ թույլտվությունները, ներառյալ ստանդարտ թույլտվությունները, ինչպես նաև ձեր սարքի Տարբերակների կամ Կարգավորումների մենյուն՝ նրա անվտանգության և առկա կարգավորման միջոցների մասին ավելի շատ բան իմանալու համար:

6. Ձեր անձնական տեղեկատվության ճշգրտությունը

BlackBerry-ը ողջամիտ քայլեր է ձեռնարկում ապահովելու, որ ձեր անձնական տեղեկատվությունը ճշգրիտ է, ամբողջական և թարմացված: BlackBerry-ը նաև հույս է դնում ձեր վրա, որ պեսուի անհրաժեշտության դեպքում դուք թարմացնեք կամ ուղղեք ձեր անձնական տեղեկատվությունը:

7. Ձեր անձնական տեղեկատվության պաշտպանությունը

BlackBerry-ը շարունակում է զարգացնել ֆիզիկական, կազմակերպական և տեխնոլոգիական միջոցները, որոնք կիրառվում են ձեր անձնական տեղեկատվությունը պաշտպանելու համար չլիազորված բացելու, փոփոխելու կամ բացահայտելու դեպքերից՝ համապատասխան զգայունության մակարդակի: Օրինակ, եթե BlackBerry-ի կայքէջը ձեր անունը և գաղտնաբառն է հարցնում, ապա այն կունենա մի շարք անվտանգության միջոցներ, որոնք պատրաստված են BlackBerry-ին հաղորդած ձեր անձնական տեղեկատվությունը կորստից, չարաշահման կամ չլիազորված փոփոխության դեպքերից պաշտպանելու համար: BlackBerry Բիզնեսի *չափորոշիչների և սկզբունքների կանոնագրքի* միջոցով BlackBerry-ի աշխատողները տեղեկանում են անձնական տեղեկատվությանը պատշաճ և անվտանգ կերպով տնօրինելու կարևորության մասին՝ այն անվտանգ վայրերում և համակարգերում պահելու համար և սահմանափակելու անձնական տեղեկատվության մատչելիությունը նրանց համար, ովքեր կարիք ունեն իմանալու դա բիզնես նպատակներից ելնելով:

Բացի այդ, BlackBerry-ի որոշ համակարգեր և գործընթացներ պարբերաբար հավաստագրվում են արտասահմանում (օրինակ՝ հավաստագրում ըստ *ISO/IEC 27001:2005 Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգի* չափորոշիչի):

ա) Ձեր անձնական տեղեկատվության պաշտպանության առումով ձեր պարտավորությունները

Դուք նույնպես պարտավոր եք պաշտպանել ձեր անձնական տեղեկատվությունը: Դուք կարող եք նվազեցնել ձեր անձնական տեղեկատվության հասանելի լինելու վտանգի աստիճանը՝ օգտագործելով ողջամիտ անվտանգության միջոցներ: Օրինակ՝ դուք պատասխանատու եք ձեր սարքի և համակարգչի հասանելիությունը կարգավորող անվտանգության համապատասխան պատշաճ այնպիսի միջոցներ կիրառելու համար, ինչպիսիք են այնպիսի ուժեղ գաղտնաբառի ստեղծումը, որը այլ անձինք չեն կարող հեշտությամբ կռահել (օրինակ՝ ներառելով կետադրական նշաններ, թվեր, մեծատառեր և փոքրատառեր, և ընտրելով պատշաճ երկարության գաղտնաբառ, որը չի պարունակում ձեր անունը կամ հաշվի անունը), օգտագործելով տարբեր գաղտնաբառեր տարբեր ծառայությունների համար և օգտագործելով թարմացված հակավիրուսային համակարգչային ծրագրեր:

Ինչպես արդեն նշվել է, որոշ դեպքերում դուք կարող եք կարգավորել Երրորդ կողմերի առաջարկներին տրվող թույլտվությունները: Դուք պետք է ժամանակ առ ժամանակ վերանայեք այդ թույլտվությունները, ներառյալ ստանդարտ թույլտվությունները, ինչպես նաև ձեր սարքի Կարգավորումների մենյուի Տարբերակներ մենյուն՝ դրա անվտանգության և առկա կարգավորման տարբերակների մասին ավելի շատ բան իմանալու համար:

Եթե դուք վերադարձնում, վաճառում, դեն եք նետում կամ փոխանցում եք ձեր սարքը կամ BlackBerry-ի մեկ այլ արտադրանք այլ անձի կամ հաստատությանը (ինչպես օրինակ ձեր սարքի տրամադրումը BlackBerry-ի կամ մեկ այլ հաստատությանը վերանորոգման, վերակոմպլեկտավորման կամ փոխարինման նպատակով), դուք պետք է ապահովեք, որ սարքից և դրա հետ կապված բոլոր աքսեսուարներից և պերիֆերիկ սարքերից հեռացվել է կամ անվտանգ կերպով ջնջվել է ցանկացած անձնական տեղեկատվություն կամ այլ կարևոր տվյալներ (օրինակ՝ SIM քարտեր, միկրոSD քարտեր): Դուք նաև պետք է այնպես անեք, որ ձեր

սարքը չկապակցվի որևէ էլեկտրոնային փոստի կամ այլ տվյալների ծառայություններին, այնպես որ էլեկտրոնային նամակները և տվյալները այլևս չուղարկվեն դեպի սարք (օրինակ՝ փուշ ծառայություններ, BlackBerry Ինտերնետային ծառայության միջոցով մատակարարվող էլեկտրոնային նամակներ, հեռավոր պահեստ): Հակառակ դեպքում ձեր անձնական տեղեկատվությունը կարող է հասանելի լինել սարքի հաջորդ օգտագործողի համար, և ձեզ կարող են գալ բաժանորդագրության և ցանցի տվյալների հետ կապված հաշիվներ: Դուք կարող եք լրացուցիչ տեղեկատվություն ստանալ պաշտպանվելու քայլերի վերաբերյալ՝ ձեր սարքի Կարգավորումներ մենյուի Տարբերակներ մենյուի միջոցով, փնտրելով օժանդակության վերաբերյալ հոդվածներ առցանց www.blackberry.com կայքում, կամ կապվելով ձեր եթերային ժամանակի ծառայության մատակարարողին:

8. Թափանցիկ լինելուն ուղղված BlackBerry շարունակական ջանքեր

BlackBerry-ը շարունակում է տրամադրել տեղեկատվություն՝ օգնելու համար մեր օգտագործողներին հասկանալ BlackBerry-ի կողմից անձնական տեղեկատվության մշակումը և այն եղանակը, որով կարելի է ընտրություն կատարել ձեր անձնական տեղեկատվության օգտագործման վերաբերյալ սույն Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնների գանազան ուղիների միջոցով, կիրառելի Ծանուցումների և լրացուցիչ այն տեղեկատվության միջոցով, որը կարող է ժամանակ առ ժամանակ հասանելի դառնալ BlackBerry զանազան կայքերում կամ ձեր սարքում:

9. Ձեր անձնա կան տեղեկատվությունը կարող է հասանելի լինել ձեզ համար

Գրավոր դիմումի հիման վրա BlackBerry-ը կարող է ձեզ տեղեկացնել, արդյոք այն պահում է ձեր անձնական տեղեկատվությունը և ողջամիտ ժամանակահատվածում՝ նվազագույն ծախսերով կամ անվճար հասանելի դարձնի այն ձեզ համար՝ համաձայն կիրառելի օրենքների: Եթե դուք նկատեք, որ ձեր անձնական տեղեկատվությունը ճշգրիտ չէ կամ ոչ ամբողջական է, BlackBerry-ը կփոփոխի ձեր տեղեկատվությունը և կտեղեկացնի բոլոր երրորդ կողմերին՝ համաձայն կիրառելի օրենքների:

Որոշակի իրավիճակներում, և կախված կիրառելի օրենքներից, BlackBerry-ը հնարավոր է չկարողանա հասանելի դարձնել ձեր մասին պահվող ամբողջ անձնական տեղեկատվությունը: Օրինակ՝ BlackBerry-ը հնարավոր է չկարողանա հասանելի դարձնել տեղեկատվությունը, եթե այն.

- հավանաբար կբացահայտի անձնական տեղեկատվություն երրորդ կողմի մասին;
- ողջամիտ կերպով կարող է ակնկալվել, որ նա վտանգում է այլ անձի կյանքը կամ անվտանգությունը;
- կբացահայտի BlackBerry-ի կամ երրորդ կողմի գաղտնի տեղեկատվությունը;
- ներառում է տեղեկատվություն, որը պաշտպանված է փաստաբանի կամ փաստաբանի հաճախորդի առավելությամբ; կամ
- ներառում է տեղեկատվություն, որը մշակված էր պայմանագրի կամ օրենքի խախտման հետաքննության հետ:

Ձեր անձնական տեղեկատվությունը չլիազորված հասանելիությունից պաշտպանելու համար BlackBerry-ը կարող է խնդրել ձեզ տրամադրել ձեզ նույնականացնող լրացուցիչ տեղեկատվություն՝ մինչև ձեր անձնական տեղեկատվության հասանելիությունը տրամադրելը:

Կախված հանգամանքներից, և կիրառելի օրենքներից, BlackBerry-ը կարող է հրաժարվել ընթացք տալ հասանելիության որոշ դիմումների (օրինակ՝ հասանելիության դիմումներ, որոնք անողջամիտ կերպով կրկնվող են կամ սխտեմատիկ, կամ եթե չափազանց ոչ կիրառական կլինեին կամ կպահանջեին անհամեմատելիորեն մեծ տեխնիկական ջանքեր):

10. Հարցեր կամ մտահոգություններ: Ինչպես կապվել մեզ հետ

BlackBerry-ը ողջունում է սույն Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնների և ձեր անձնական տեղեկատվության մեր կողմից մշակման եղանակի վերաբերյալ ձեր հարցերը կամ ակնարկները: Եթե հարցեր, մտահոգություններ ունեք, կամ ցանկանում եք խնդրել ձեր անձնական տեղեկատվության հասանելիությունը՝ համաձայն կիրառելի կանոնների կամ տվյալների պաշտպանության օրենքների, խնդրում ենք կապվել BlackBerry-ի հետ էլեկտրոնային փոստի միջոցով կամ գրավոր, և մենք կկիրառենք կոմերցիոն տեսակետից ողջամիտ ջանքեր արձագանքելու համար.

- Էլեկտրոնային փոստով՝ privacyoffice@blackberry.com, կամ
- Գրեք BlackBerry-ի ձեզ ամենամոտ գտնվող գրասենյակներից մեկի հասցեով.
 - *BlackBerry Privacy Office c/o BlackBerry (attention Legal Department), 2200 University Avenue East, Waterloo, Ontario, Canada N2K 0A7*
 - *BlackBerry Privacy Office c/o BlackBerry (attention Legal Department), 200 Bath Road, Slough, Berkshire, United Kingdom SL1 3XE*
 - *BlackBerry Privacy Office c/o BlackBerry (attention Legal Department), 1 International Business Park, The Synergy Building, 2nd Floor, Singapore 609917*

ա) ձեր նախասիրությունների կարգավորում

Ընդհանրապես, դուք ցանկացած պահին կարող եք չեղյալ անել ձեր անձնական տեղեկատվությունը BlackBerry-ի կողմից մշակելու ձեր համաձայնությունը՝ Անձնական տեղեկատվության պաշտպանության սույն կանոններին համաձայն, համապատասխան իրավական կամ պայմանագրային պարտավորությունների և ողջամիտ կերպով ծանուցման դեպքում: Օրինակ՝ չնայած, որ դուք կարող եք օգտագործել BlackBerry-ի առաջարկները որոշ նպատակներով առանց մեզ որևէ անձնական տեղեկատվություն տրամադրելու, BlackBerry-ը կարող է կարիք ունենա մշակել անձնական տեղեկատվությունը որոշ ծառայությունների համար, ներառյալ՝ վճարովիները կամ որոնք պահանջում են շարունակական հարաբերություն, ինչպիսիք են գրանցման կամ բաժանորդագրման ծառայությունները: Որպես այդպիսին, BlackBerry-ը կարող է շարունակել օգտագործել ձեր անձնական տեղեկատվությունը, ինչպես որ կարող է պահանջվել ձեզ պահանջվող ծառայությունները մատակարարելու համար, և այն աստիճանի, որով BlackBerry-ը, ըստ պայամանագրի, պարտավորվում է այդպես վարվել կամ այն դեպքում, երբ անհրաժեշտ է կիրառել պայմանագրային պարտավորությունները, որոնք դուք կարող եք ունենալ BlackBerry-ի հետ: Եթե դուք հրաժարվում եք BlackBerry-ին տրամադրել պահանջվող տեղեկատվությունը կամ այս տեղեկատվությունը օգտագործելու և բացահայտելու

վերաբերյալ ձեր համաձայնությունը չեղյալ անելու համար մեզ հետ հետագայում գրավոր կապնվելով վերոհիշյալ հասցեներից մեկով, հնարավոր է, որ BlackBerry-ը այլևս չկարողանա ձեզ տրամադրել BlackBerry Առաջարկներ:

Մարկետինգային կամ առևտրային հաղորդակցություն՝ Դուք կարող եք դադարեցնել BlackBerry-ի BlackBerry® արտադրանքների, ծառայությունների և համակարգչային ծրագրերի վերաբերյալ մարկետինգային կամ առևտրային հաղորդագրությունների բաժանորդագրությունը հետևյալ կերպ.

- Ընտրելով դադարեցնել բաժանորդագրությունը կապը BlackBerry-ից ստացված մարկետինգային կամ առևտրային հաղորդագրության վերջում,
- նշելով ձեր նախասիրությունը www.blackberry.com/unsubscribe կայքում; կամ
- գրելով *BlackBerry Privacy Office c/o BlackBerry (attention Legal Department), 2200 University Avenue East, Waterloo, Ontario, Canada N2K 0A7* խորհուրդ տալով, թե կոնկրետ որ տեսակի մարկետինգային և առևտրային հաղորդագրությունները դուք այլևս չեք ցանկանում ստանալ:

Քուքի-ֆայլեր. Խնչպես նշված է վերևում, դուք կարող եք հրաժարվել BlackBerry-ի կողմից Քուքի-ֆայլերի օգտագործումից հետևյալ եղանակներից մեկի միջոցով.

- Փոխեք ձեր բրաուզերի կարգավորումները՝ մերժելու համար Քուքի-ֆայլերը կամ մատնանշելու, երբ ուղարկվում է Քուքի-ֆայլ:
- Հեռացրեք կամ արգելափակեք բրաուզերի Քուքի-ֆայլերը՝ օգտագործելով ձեր բրաուզերի կարգավորումները, սակայն սա կարող է ազդել որոշակի BlackBerry Առաջարկներ օգտագործելու ձեր կարողության վրա, քանի որ դրանք հնարավոր է լավ կամ ընդհանրապես չաշխատեն, երբ Քուքի-ֆայլերը ապասկտիվացրած են:
- Անմիջապես անջատեք որոշակի **գործողությունների** Քուքի-ֆայլեր <http://metrics.blackberry.com/optout.html> կայքէջում:

բ) Սույն Անձնական տեղեկատվության պաշտպանության կանոնների փոփոխություններ

BlackBerry-ը պարբերաբար թարմացնում է Անձնական տեղեկատվության պաշտպանության սույն կանոնները, այնպես որ նրանք համապատասխանեն արդի փոփոխվող տեխնոլոգիաներին, կիրառելի օրենքներին, մեր զարգացող բիզնես գործունեությանը և մեր հաճախորդների կարիքներին: BlackBerry-ը խրախուսում է ձեզ ժամանակ առ ժամանակ կարդալ Անձնական տեղեկատվության պաշտպանության սույն կանոնները՝ շարունակելու համար տեղեկացված լինել, թե ինչպես է BlackBerry-ը կարգավորում ձեր անձնական տեղեկատվությունը: Եթե Անձնական տեղեկատվության պաշտպանության սույն կանոններում փոփոխություն է կատարվում, ապա BlackBerry-ը կվերանայի Անձնական տեղեկատվության պաշտպանության սույն կանոններում նշվող “Թարմացված է վերջին անգամ” գրառման ամսաթիվը:

Եթե կատարվում են էական փոփոխություններ, որոնք ազդում են ձեր վրա, մենք կտեղեկացնենք հաճախարդներին՝ տեղադրելով աչքի ընկնող ծանուցում www.blackberry.com/legal կայքէջում:

Կախված հանգամանքներից, մենք նաև կարող ենք որոշել հաճախորդներին էլեկտրոնային ծանուցում ուղարկել: Եթե դուք շարունակում եք օգտվել մեր BlackBerry Առաջարկներից փոփոխության ծանուցումը ստանալուց հետո, համարվում է, որ դուք ընդունել եք այդպիսի փոփոխությունները:

Թարմացված է վերջին անգամ 2014-09